



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 24.01.2014թ. ԹԻՎ 1/41 Ա ՈՐՈՇՄԱՄԲ**

ՀԱՎԵԼՎԱԾ

**ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 13
ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ**

ԵՐԵՎԱՆ 2014

Ֆինանսական դիտարկումների կենտրոն + 374 10 54 50 88, 23 01

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. Կիրառելիության շրջանակը	3
ԳԼՈՒԽ 2. Ընդհանուր դրույթներ	3
ԳԼՈՒԽ 3. Փողերի լվացման հնարավոր սխեմաների նկարագրությունը	4
Ա.1) Խաղային արժեկիրների օգտագործմամբ փողերի լվացման մեթոդներ.....	4
Ա.2) Խաղային արժեկիրների օգտագործմամբ փողերի լվացման կասկածելիության չափանիշներ	5
Բ.1) Գործարքների մասնատմամբ կամ տրոհմամբ փողերի լվացման մեթոդներ	7
Բ.2) Գործարքների մասնատմամբ կամ տրոհմամբ փողերի լվացման կասկածելիության չափանիշներ	8
Գ.1) Թղթադրամների խոշորացմամբ փողերի լվացման մեթոդներ	9
Գ.2) Թղթադրամների խոշորացմամբ փողերի լվացման կասկածելիության չափանիշներ	10
Դ.1) Անհատական հաշիվների և պահատուփերի օգտագործմամբ փողերի լվացման մեթոդներ.....	10
Դ.2) Անհատական հաշիվների և պահատուփերի օգտագործմամբ փողերի լվացման կասկածելիության չափանիշներ	11
Ե.1) Կեղծված փաստաթղթերի և վճարամիջոցների օգտագործմամբ փողերի լվացման մեթոդներ.....	12
Ե.2) Կեղծ փաստաթղթերի և վճարամիջոցների օգտագործմամբ փողերի լվացման կասկածելիության չափանիշներ	13
Զ.1) Պայմանավորված խաղի միջոցով փողերի լվացման մեթոդներ.....	13
Զ.2) Պայմանավորված խաղի միջոցով փողերի լվացման կասկածելիության չափանիշներ	14
Է) Այլ մեթոդներ և չափանիշներ.....	14
ԳԼՈՒԽ 4. Եզրակացություններ	15



ԳԼՈՒԽ 1. Կիրառելիության շրջանակը¹

1. Սույն տիպաբանությամբ ներկայացվող մեթոդների և գործիքների կիրառությամբ փողերի լվացման սխեմաները կարող են վերաբերել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաշվետվություն տրամադրող որոշակի անձանց, մասնավորապես՝ շահումով խաղ, վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատներին, ինչպես նաև բանկերին:

2. Բացի այդ, սույն տիպաբանությամբ նկարագրվող սխեմաները ճանաչողական տեսանկյունից կարող են հետաքրքրություն ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող՝ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարային գործիքների (օրինակ՝ վճարային քարտերի, չեկերի, էլեկտրոնային փողերի և այլն) թողարկմամբ, սպասարկմամբ և իրացմամբ զբաղվող վճարահաշվարկային կազմակերպությունների և անձանց, վճարահաշվարկային համակարգի օպերատորների համար:

ԳԼՈՒԽ 2. Ընդհանուր դրույթներ

3. Խաղատների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակում գործարքների բազմազանությունը, հաճախականությունն ու ծավալները այս ոլորտը փողերի լվացման տեսանկյունից առանձնակի խոցելի է դարձնում: Խաղատնային գործունեությունն իր բնույթով կապված է թե՛ կանխիկ, թե՛ անկանխիկ դրամական միջոցների մեծածավալ շրջանառության հետ, որը տեղի է ունենում խաղային գործընթացի բոլոր երեք փուլերում՝ խաղի մեջ մտնելիս (դրամի կամ այլ վճարամիջոցների դիմաց խաղային գործիքներ ձեռք բերելով), խաղի ընթացքում (ձեռք բերված խաղային գործիքներն օգտագործելով) և խաղից դուրս գալիս (խաղային գործիքների դիմաց դրամ կամ այլ վճարամիջոցներ ստանալով):

4. Խաղատների միջոցով փողերի լվացման հնարավոր սխեմաները բնորոշելու և բացահայտելու համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ այդ սխեմաների իրացման նպատակով կիրառվող մեթոդների և գործիքների մասին, ինչպես նաև սահմանել հաճախորդի անձին կամ գործելակերպին վերաբերող այն

¹ Սույն տիպաբանությունը մշակվել է ՖԱԹՖ-ի կողմից 2009 թվականի մարտ ամսին հրապարակված՝ «Խաղատների և խաղատնային գործունեության խոցելի կողմերը» վերտառությամբ վերլուծական նյութի հիման վրա (FATF Report on Vulnerabilities of Casinos and Gaming Sector, March 2009) (տես՝ <http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/reports/Vulnerabilities%20of%20Casinos%20and%20Gaming%20Sector.pdf>)



կասկածելիության չափանիշները կամ ազդակները, որոնց առկայությունը կարող է վկայել փողերի լվացման այս կամ այն սխեմայի հնարավոր առկայության մասին:

5. Սույն տիպաբանության շրջանակներում հակիրճ անդրադարձ է կատարվում խաղատների միջոցով փողերի լվացման որոշակի մեթոդների և դրանց իրացման գործիքներին, որոնց հաջորդում է տվյալ մեթոդի համար բնութագրական կասկածելիության չափանիշների կամ ազդակների նկարագրությունը: Նշված մեթոդները հետևյալն են.

- ա) Խաղային արժեկիրների օգտագործում.
- բ) Գործարքների մասնատում կամ տրոհում.
- գ) Թղթադրամների խոշորացում.
- դ) Անհատական հաշիվների և պահատուփերի օգտագործում.
- ե) Կեղծված փաստաթղթերի և վճարամիջոցների օգտագործում.
- զ) Պայմանավորված խաղ:

ԳԼՈՒԽ 3. Փողերի լվացման հնարավոր սխեմաների նկարագրությունը

Ա.1) Խաղային արժեկիրների օգտագործմամբ փողերի լվացման մեթոդներ

6. Խաղային գործընթացը կազմակերպելու նպատակով խաղատները գործածում են տարաբնույթ խաղային արժեկիրներ կամ գործիքներ, որոնց տեսակներն ու կիրառությունը պայմանավորված են ինչպես խաղատնային գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջներով, այնպես էլ տվյալ խաղատան կողմից սահմանված ներքին կանոններով: Առավել հաճախ գործածվող խաղային արժեկիրների թվին են պատկանում կանխիկը, խաղանիշները, խաղատոմսերը, խաղարկային միավորները, խաղատան չեկերը, բոնուսային հավաստագրերը, խաղանիշերի գնման վաուչերները, խաղատան մրցանակային քարտերը: Նշվածներից ամենալայն տարածում ունեն խաղանիշերը և խաղարկային միավորները, որոնցից առաջինը ֆիզիկական, իսկ երկրորդը՝ էլեկտրոնային տեսքով խաղատան կողմից տրամադրվում են խաղացողներին՝ խաղի մեջ օգտագործելու համար: Խաղային արժեկիրների օգտագործմամբ կիրառվում են փողերի լվացման հետևյալ մեթոդները.

1) **Խաղանիշերի կամ խաղարկային միավորների ձեռքբերում և վճարային փաստաթղթի ստացում.** Այս սխեմայի իրացման դեպքում փող լվացողները սովորաբար կանխիկով կամ խաղատանն իրենց անհատական հաշվի միջոցներով գնում են խաղանիշեր կամ խաղարկային միավորներ, որից հետո դրանք փոխարինվում են խաղատան կողմից դուրս գրված չեքով կամ բանկային հաշվից վճարման հանձնարարականով, իսկ որոշ դեպքերում նաև՝ կանխիկով:

Այս մեթոդն ավելի լավ է աշխատում խաղատնային ցանցերի դեպքում, երբ ցանցի անդամ մի խաղատանը ձեռք են բերվում խաղանիշեր կամ խաղարկային միավորներ, որոնք օգտագործվում են ուրիշ երկրում ցանցի անդամ մեկ այլ խաղատանը չեքով կամ վճարման հանձնարարականով, իսկ որոշ դեպքերում նաև՝ կանխիկով փոխարինելու նպատակով: Ընդ որում, խաղանիշ ձեռք բերելու դեպքում փող լվացողները կարող են դրանք որոշ ժամանակ պահել իրենց մոտ՝ հետագայում հավաստված շահում ունենալու ակնկալիքով կամ չեքով, վճարման հանձնարարականով կամ կանխիկով փոխարինելու նպատակով:

2) **«Մաքուր» խաղացողներից բարձր գնով խաղանիշերի կամ շահման հավաստագրերի գնում.** Փող լվացողները կարող են խաղանիշեր կամ շահման հավաստագրեր գնել այլ՝ իրենց հետ կապ չունեցող «մաքուր» խաղացողներից: Ընդ որում, այդ խաղացողներին շահագրգեռելու համար նրանցից խաղանիշերը կամ շահման հավաստագրերը գնվում են դրանց անվանական արժեքից բարձր գնով՝ գործարքը շահավետ դարձնելով թե՛ վաճառողի համար, ով դրամական արտահայտությամբ ավելի մեծ գումար է ստանում, թե՛ գնորդի համար, ով ձեռք է բերում իր ապօրինի ճանապարհով ստացած եկամուտները օրինականացնելու համար անհրաժեշտ միջոցներ:

Համանման տրամաբանությամբ, փող լվացողները «մաքուր» խաղացողներից կարող են գնել նաև խաղային այլ արժեկիրներ, օրինակ՝ բոնուսային հավաստագրեր կամ խաղատան մրցանակային քարտեր:

3) **Ապօրինի գործարքների համար խաղային արժեկիրները որպես վճարամիջոց օգտագործում.** Խաղային արժեկիրները, մասնավորապես՝ խաղանիշերը, բոնուսային հավաստագրերը կամ խաղատան մրցանակային քարտերը կարող են օգտագործվել փող լվացողների կողմից կատարվող ապօրինի գործարքներում ձեռք բերված ապրանքների (օրինակ՝ թմրամիջոցների, ապօրինի զենքի, մաքսանենգ ապրանքների) դիմաց վճարելու համար: Վճարումը խաղային արժեկիրներով ստացած անձն իր հերթին կարող է դրանք օգտագործել այլ անձանց վճարումներ կատարելու, խաղատանը կանխիկով կամ վճարման հանձնարարականով փոխարինելու նպատակով:

Խաղային արժեկիրները որպես վճարամիջոց օգտագործելը հարմար է նաև այն առումով, որ դրանք արժույթ չեն համարվում, այսինքն ենթակա չեն բոլոր այն սահմանափակումներին կամ պահանջներին, որպիսիք կիրառվում են կանխիկ արժույթի օգտագործման և շարժի նկատմամբ (օրինակ՝ երկրի սահմանի հատման դեպքում որոշակի գումարից մեծ կանխիկի հայտարարագրման պահանջը):

Ա.2) Խաղային արժեկիրների օգտագործմամբ փողերի լվացման կասկածելիության չափանիշներ

7. Խաղային արժեկիրների օգտագործմամբ փողերի լվացման սխեմաների հնարավոր առկայության մասին կարող են վկայել հետևյալ չափանիշները.

- Հաճախորդը գնում և կանխիկացման է ներկայացնում խաղանիշեր՝ գրեթե կամ ընդհանրապես չխաղալով.
- Հաճախորդը նույն օրվա ընթացքում բազմաթիվ անգամ խաղանիշերը փոխարինում է կանխիկ դրամով և հակառակը.
- Հաճախորդի գնած և կանխիկացման ներկայացված խաղանիշերի ծավալը մոտավորապես նույնն է կամ հավասար է.
- Հաճախորդը գնում է խաղանիշեր և շատ չանցած լքում է խաղատունը.
- Հաճախորդը խաղանիշեր է գնում երրորդ անձանց միջոցով.
- Հաճախորդի մոտ հայտնաբերվում են իր հետ խաղատուն բերված խաղանիշեր.
- Հաճախորդը վճարման է ներկայացնում ավելի վաղ թողարկման ամսաթվով խաղանիշերի գնման վաուչերներ.
- Հաճախորդը պահանջում է, որ շահումը տրամադրեն չեքի կամ վճարման հանձնարարականի տեսքով՝ իր շահածին որոշակի կանխիկ գումար ավելացնելուց հետո.
- Հաճախորդը խաղանիշեր է գնում բազմաթիվ չեկեր կամ վճարման հանձնարարականներ իր անհատական հաշվին մուտքագրելով կամ շահումը պահանջում է բազմաթիվ չեկերի կամ վճարման հանձնարարականների տեսքով.
- Հաճախորդը խաղային ապարատ մուտքագրում է միջոցներ և գրեթե կամ ընդհանրապես չխաղալով պահանջում դրանք գրանցել իր անհատական հաշվին՝ խաղարկային միավորների տեսքով.
- Հաճախորդը մեծ գումարով խաղարկային միավորների կանխիկացում է կատարում այն դեպքում, երբ խաղատանը նրա գտնված ժամանակ խոշոր շահում չի գրանցվել.
- Հաճախորդը կանխիկ դրամով զգալի գումարներ է մուտքագրում շահելու բարձր հավանականությամբ խաղային ապարատ, սակայն «առավելագույն խաղադրույքով» չի խաղում, ինչը թույլ է տալիս նվազեցնել խոշոր կորստի ռիսկը և նվազագույն խաղի միջոցով խաղարկային կրեդիտներ կուտակել.
- Հաճախորդը պահանջում է իր կուտակած խաղարկային միավորները փոխանցել այլ խաղատանն իր անհատական հաշվին.
- Հաճախորդի խաղադրույքներ կատարելու կամ խաղարկային միավորներ ծախսելու վարքագիծը կտրուկ փոխվում է.
- Հաճախորդը ակնհայտորեն չունի շահելու նպատակ կամ շահելը նրա համար երկրորդական է:

Բ.1) Գործարքների մասնատմամբ կամ տրոհմամբ փողերի լվացման մեթոդներ

8. Գործարքների մասնատումը կամ տրոհումը մեկ մեծ գումարով գործարքը բազմաթիվ փոքր գումարով գործարքների բաժանելն է՝ կասկածների առաջացման հավանականությունը նվազեցնելու և որոշակի սահմանաչափը չգերազանցող գործարքների դեպքում նույնականացման կամ դրանց վերաբերյալ հաշվետվականության պահանջներից խուսափելու նպատակով: Գործարքների մասնատմամբ կամ տրոհմամբ կիրառվում են փողերի լվացման հետևյալ մեթոդները.

1) **Դրամական միջոցների պարբերական մուտքագրում.** Այս դեպքում փող լվացողները իրենց անհատական հաշիվը պարբերաբար համալրում են նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափը չգերազանցող կանխիկ գումարներով կամ տարբեր ֆինանսական հաստատությունների կողմից դուրս գրված՝ նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափը չգերազանցող անվանական արժեքով չեկերով:

2) **Երրորդ անձանց ներգրավմամբ գործարքների իրականացում.** Փող լվացողների կազմակերպված խումբը անձամբ կամ խաղատան հաճախորդների անվամբ բացված բազմաթիվ անհատական հաշիվներով կատարում է նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափը չգերազանցող գումարով գործարքներ:

3) **Տարբեր հերթափոխների ընթացքում գործարքների իրականացում.** Փող լվացողները հետևում են խաղատան դրամարկղերի աշխատանքային հերթափոխների փոփոխության ժամանակացույցին և պարբերաբար, օրինակ՝ յուրաքանչյուր հերթափոխի սկզբին և ավարտին ձեռք են բերում կամ կանխիկացնում նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափը չգերազանցող գումարներով խաղային արժեկիրներ:

4) **Խաղալու տեղի պարբերական փոփոխություն.** Այս դեպքում փող լվացողները պարբերաբար փոխում են խաղասեղանը, խաղասրահը կամ նույնիսկ խաղատունը ամեն անգամ, երբ կատարված գործարքների գումարն ընդհուպ մոտենում է նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափին:

5) **Շահած գումարի տրոհված ստացում.** Որոշ դեպքերում փող լվացողները նախընտրում են նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափը գերազանցող շահած գումարն ամբողջությամբ և միանգամից ստանալու փոխարեն վերջինս ստանալ այդ սահմանաչափը չգերազանցող կանխիկ գումարների, առանձին չեկերի կամ խաղանիշերի տեսքով:

Բ.2) Գործարքների մասնատմամբ կամ տրոհմամբ փողերի լվացման կասկածելիության չափանիշներ

9. Գործարքների մասնատմամբ կամ տրոհմամբ փողերի լվացման սխեմաների հնարավոր առկայության մասին կարող են վկայել հետևյալ չափանիշները.

- Հաճախորդը պարբերաբար գնում է խաղային արժեկիրներ և (կամ) կատարում է խաղադրույքներ նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափին շատ մոտ, բայց դրան չգերազանցող կանխիկ գումարներով.
- Հաճախորդը խաղային արժեկիրներ գնելու համար օգտագործում է տարբեր բանկերի կողմից դուրս գրված և նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափին շատ մոտ, բայց դրան չգերազանցող անվանական արժեքով չեկեր.
- Հաճախորդը խաղային արժեկիրներ գնելու համար օգտագործում է ոչ թե անձամբ իր, այլ ուրիշների (հարազատների կամ այլ անձանց) անունով դուրս գրված չեկեր.
- Հաճախորդի բոլոր գործարքները կատարվում են երրորդ անձի ներկայությամբ, ով գործարքների կատարմանը չի մասնակցում.
- Հաճախորդի անհատական հաշիվն օգտագործվում է երրորդ անձի կողմից.
- Հաճախորդը խաղանիշեր գնելու համար գումար է վերցնում երրորդ անձից.
- Հաճախորդը խաղանիշերի դրամով փոխարինելուց ստացված գումարը հանձնում է երրորդ անձի.
- Մեկ հաճախորդի անհատական հաշվից փոխանցումներ են կատարվում մի շարք հաճախորդների անհատական հաշիվներին.
- Մի շարք հաճախորդների անհատական հաշիվներից փոխանցումներ են կատարվում մեկ հաճախորդի անհատական հաշվին.
- Հաճախորդը սպասում է խաղատան անձնակազմի հերթափոխի փոխվելուն՝ նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափին շատ մոտ, բայց դրան չգերազանցող գումարով խաղանիշեր գնելու կամ փոխանակելու համար.
- Հաճախորդը փոխում է խաղասեղանը, խաղասրահը կամ խաղատունը ամեն անգամ, երբ իր կողմից կատարված գործարքների գումարն ընդհուպ մոտենում է նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափին.
- Հաճախորդը պահանջում է, որ շահած գումարն իրեն տրամադրվի նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափը չգերազանցող կանխիկ գումարների, առանձին չեկերի կամ վճարման հանձնարարականների տեսքով:

Գ.1) Թղթադրամների խոշորացմամբ փողերի լվացման մեթոդներ

10. Փող լվացողները կամ նրանց կազմակերպված խմբերը խաղատների կողմից մատուցվող ծառայություններն օգտագործում են փոքր անվանական արժեքով մեծ քանակությամբ թղթադրամները մեծ անվանական արժեքով փոքր քանակությամբ թղթադրամների վերածելու համար: Փողերի լվացման այս մեթոդն առավել հաճախ կիրառվում է այնպիսի հանցագործություններից ստացված հանցավոր եկամուտների օրինականացման համար, ինչպիսին է, օրինակ, թմրանյութերի վաճառքը, որի արդյունքում պարբերաբար առաջանում է փոքր անվանական արժեքով թղթադրամները մեծերով փոխարինելու անհրաժեշտություն: Թղթադրամների խոշորացմամբ փողերի լվացման սխեման սովորաբար կազմակերպվում է մի քանի հոգուց բաղկացած խմբի կողմից՝ խոշորացման ենթակա գումարը նախքան խաղատուն մտնելը բաժանելով խմբի անդամների միջև: Թղթադրամների խոշորացմամբ կիրառվում են փողերի լվացման հետևյալ մեթոդները.

1) **Խաղատան դրամարկղում խոշորացում.** Այս սխեմայի իրացման դեպքում փող լվացողների կազմակերպված խմբի անդամները միմյանցից առանձին մոտենում են խաղատան դրամարկղին և որպես հաճախորդ խնդրում իրենց մոտ առկա փոքր անվանական արժեքով թղթադրամները փոխարինել մեծերով:

2) **Թղթադրամ ընդունող սարքերի կամ խաղային ապարատների միջոցով խոշորացում.** Խաղային ապարատներ ունեցող խաղատների մեծ մասում տեղադրված են թղթադրամ ընդունող սարքեր, որոնց միջոցով խաղացողներն իրենց անհատական հաշվին մուտքագրում են խաղարկային միավորներ: Այս եղանակով կուտակված խաղարկային միավորները խաղի համար գրեթե կամ ընդհանրապես չօգտագործելով՝ փող լվացողները փոխարկում են իրենց անհատական հաշվի մնացորդը՝ մուտքագրված փոքր անվանական արժեքով թղթադրամների դիմաց ստանալով մեծ անվանական արժեքով թղթադրամներ: Նույն սխեման կարելի է իրացնել նաև թղթադրամներ ընդունող խաղային ապարատների միջոցով:

3) **Անհատական հաշվի համալրմամբ խոշորացում.** Այս սխեմայի իրացման դեպքում փող լվացողների կազմակերպված խմբի անդամներից յուրաքանչյուրը խաղատանն իր անվամբ բացված անհատական հաշվին մուտքագրում է փոքր անվանական արժեքով թղթադրամներով գումարներ՝ իբրև թե խաղանիշեր կամ խաղարկային միավորներ ձեռք բերելու նպատակով: Այնուհետև անհատական հաշվին կուտակված գումարը, որոշ դեպքերում՝ մեկ այլ անհատական հաշվի փոխանցվելուց հետո, կանխիկացվում է մեծ անվանական արժեքով թղթադրամների տեսքով:

Գ.2) Թղթադրամների խոշորացմամբ փողերի լվացման կասկածելիության չափանիշներ

11. Թղթադրամների խոշորացմամբ փողերի լվացման սխեմաների հնարավոր առկայության մասին կարող են վկայել հետևյալ չափանիշները.

- Հաճախորդի մոտ առկա են մեծ քանակությամբ թղթադրամներ կամ մետաղադրամներ.
- Հաճախորդը փորձում է խաղատան դրամարկղում փոքր անվանական արժեքով թղթադրամները փոխարինել մեծերով՝ դրա համար ներկայացնելով տարատեսակ պատճառաբանություններ.
- Հաճախորդը թղթադրամ ընդունող սարքի կամ խաղային ապարատի միջոցով փոքր անվանական արժեքով թղթադրամներով խաղարկային միավորներ գնելուց հետո գրեթե կամ ընդհանրապես չի խաղում և անմիջապես փորձում է մեծ անվանական արժեքով թղթադրամներով կանխիկացնել կուտակված խաղարկային միավորները.
- Հաճախորդը խաղատանը բացված անհատական հաշվին փոքր անվանական արժեքով թղթադրամներով գումարներ մուտքագրելուց հետո գրեթե կամ ընդհանրապես չի խաղում և անմիջապես փորձում է մեծ անվանական արժեքով թղթադրամներով կանխիկացնել անհատական հաշվի մնացորդը:

Դ.1) Անհատական հաշիվների և պահատուփերի օգտագործմամբ փողերի լվացման մեթոդներ

12. Բազմաթիվ խաղատներ իրենց հաճախորդներին առաջարկում են անհատական դեբետային կամ կրեդիտային հաշիվներ, որոնց բացման և վարման համար կիրառվող ընթացակարգերը հաճախորդի պատշաճ ուսումնասիրության տեսանկյունից էապես զիջում են ֆինանսական հաստատությունների կողմից կիրառվողներին: Ֆինանսական հաստատությունում և խաղատանը բացված անհատական հաշիվների, ինչպես նաև որևէ խաղատան կամ խաղատների ցանցի ներսում հաճախորդների անհատական հաշիվների միջև փոխանցումները փողերի լվացման առումով կարող են միանգամայն ռիսկային լինել:

13. Մի շարք խաղատներ հատկապես իրենց կարևոր կամ «մեծ» խաղացողներին առաջարկում են նաև անհատական պահատուփի տրամադրման ծառայություններ, որի օգտագործման ընթացակարգերը նույնպես հաճախորդի պատշաճ ուսումնասիրության տեսանկյունից նվազագույնի են հասցված: Խաղատանը բացված անհատական հաշիվների և պահատուփերի օգտագործմամբ կիրառվում են փողերի լվացման հետևյալ մեթոդները.

1) **Տարբեր վճարամիջոցներով անհատական հաշվի համալրում.** Որոշ խաղատներ հաճախորդներին հնարավորություն են ընձեռնում իրենց անհատական հաշիվը համալրել ոչ միայն կանխիկով, այլ տարատեսակ չեկերով (ինչպիսիք են,

օրինակ, ճանապարհորդական, ըստ ներկայացնողի և այլ չեկերը) կամ այլ բարձր իրացվելի արժեթղթերով (ինչպիսիք են, օրինակ, մուրհակը, պարտատոմսը և այլն)՝ հետագայում հաշվի մնացորդի ազատ տնօրինման հնարավորությամբ:

2) **Էլեկտրոնային փոխանցմամբ անհատական հաշվի համալրում.** Այս դեպքում հաճախորդի անհատական հաշիվը համալրվում է տեղական կամ արտասահմանյան որևէ ֆինանսական հաստատությունից կատարված էլեկտրոնային փոխանցումով, ինչից հետո հաճախորդը կարող է ազատ տնօրինել իր հաշվի մնացորդը, այդ թվում՝ գրեթե կամ ընդհանրապես չխաղալով և հաշվի համալրումից որոշ ժամանակ հետո դրա մնացորդը կանխիկացնելով:

3) **Անդրսահմանային անհատական հաշիվների օգտագործում.** Խաղատնային ցանցերն առաջարկում են այնպիսի անհատական հաշիվների բացում և սպասարկում, որոնց դեպքում, օրինակ, հաճախորդը «Ա» երկրում գտնվող խաղատանն իր անհատական հաշիվը համալրելով կարող է «Բ» երկրում գտնվող՝ ցանցի անդամ խաղատանն օգտագործել խաղային արժեկիրներ ձեռք բերելու, ինչպես նաև կանխիկացնելու համար: Ընդ որում, այս դեպքում հաճախորդն իր հաշվին առկա միջոցները տնօրինելիս դրանք ոչ ֆիզիկապես, ոչ էլեկտրոնային եղանակով՝ փոխանցման միջոցով երկրից երկիր չի տեղափոխում, ինչը նշանակում է, որ կանխիկի կամ փոխանցման հետ կապված հաշվետվականության պահանջներ չեն առաջանում:

4) **Անհատական պահատուփի օգտագործում.** Խաղատների կողմից իրենց կարևոր կամ «մեծ» խաղացողներին առաջարկվող անհատական պահատուփի տրամադրման ծառայությունները փողերի լվացման տեսանկյունից ռիսկային են՝ հաշվի առնելով դրանց օգտագործման հետ կապված թափանցիկության փաստացի բացակայությունը, ինչպես նաև երրորդ անձանց՝ գաղտնաբառի կամ գաղտնաբանալու միջոցով դրանցից օգտվելու հնարավորությունը:

Դ.2) Անհատական հաշիվների և պահատուփերի օգտագործմամբ փողերի լվացման կասկածելիության չափանիշներ

14. Անհատական հաշիվների և պահատուփերի օգտագործմամբ փողերի լվացման սխեմաների հնարավոր առկայության մասին կարող են վկայել հետևյալ չափանիշները.

- Հաճախորդի անհատական հաշիվը հաճախորդի գործարար կերպարին չհամապատասխանող կերպով համալրվում է կանխիկով, չեկերով և էլեկտրոնային փոխանցումներով.
- Հաճախորդի անհատական հաշվին միջոցները մուտքագրվելուց հետո շատ չանցած ելքագրվում են.
- Հաճախորդի անհատական հաշվով միջոցների զգալի շրջանառության պարագայում խաղային գործունեությունը գրեթե կամ ընդհանրապես բացակայում է.

- Հաճախորդի անհատական հաշվին միջոցներ են մուտքագրվում բարձր ռիսկային երկրներում գտնվող բանկային կամ այլ անհատական հաշիվներից, անհայտ աղբյուրներից.
- Հաճախորդի անհատական հաշվից փոխանցումներ են կատարվում բարձր ռիսկային երկրներում գտնվող բանկային կամ այլ անհատական հաշիվների, անհայտ շահառուների.
- Գործարքների կատարվում են միջնորդի (լիազոր ներկայացուցչի) միջոցով.
- Հաճախորդի անհատական հաշվին կատարվում են փոխանցումներ իրավաբանական անձանց կողմից.
- Հաճախորդի անհատական հաշվից կատարվում են (երկրից դուրս) փոխանցումներ և նույն կամ համանման գումարով հետ ստացումներ.
- Երրորդ անձինք պարբերաբար օգտվում են հաճախորդի անհատական պահատուփից:

Ե.1) Կեղծված փաստաթղթերի և վճարամիջոցների օգտագործմամբ փողերի լվացման մեթոդներ

15. Փող լվացողները, ինչպես հանցավոր գործունեությամբ զբաղվող այլ անձինք, խնդիր ունեն չբացահայտելու իրենց ինքնությունը՝ հետագայում հանցագործության բացահայտումը հնարավորինս դժվարացնելու նպատակով: Ավելին, որոշ դեպքերում փողերի լվացման հանցանքն անմիջապես հաջորդում է կեղծված վճարամիջոցների (օրինակ՝ թղթադրամների, չեկերի, դեբետային կամ կրեդիտային քարտերի) միջոցով գումարների հափշտակության հանցանքին: Կեղծ փաստաթղթերի և վճարամիջոցների օգտագործմամբ կիրառվում են փողերի լվացման հետևյալ մեթոդները.

1) **Կեղծ նույնականացման տվյալների օգտագործում.** Այս դեպքում խաղատան կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության, մասնավորապես՝ հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման նպատակով կիրառվող ընթացակարգերի շրջանակներում փող լվացողները ներկայացնում են անձը հաստատող կեղծված փաստաթղթեր և (կամ) տրամադրում են սխալ անձնական տվյալներ (օրինակ՝ հասցե, հեռախոսահամար, զբաղմունքի տեսակ և այլն):

2) **Կեղծված վճարամիջոցների օգտագործում.** Խաղային արժեկիրներ ձեռք բերելու և (կամ) իրենց անհատական հաշիվը համարելու համար փող լվացողները կարող են օգտագործել կեղծ թղթադրամներ և չեկեր, ինչպես նաև գողացված անհատական տվյալների (օրինակ՝ բանկային հաշվեհամարների և գաղտնաբառերի) միջոցով կեղծված անկանխիկ վճարամիջոցներ, մասնավորապես՝ դեբետային, կրեդիտային կամ նվեր քարտեր:

Ե.2) Կեղծ փաստաթղթերի և վճարամիջոցների օգտագործմամբ փողերի լվացման կասկածելիության չափանիշներ

16. Կեղծ փաստաթղթերի և վճարամիջոցների օգտագործմամբ փողերի լվացման սխեմաների հնարավոր առկայության մասին կարող են վկայել հետևյալ չափանիշները.

- Հաճախորդը ներկայանում է մտացածին անվամբ կամ տարբեր անուններով.
- Հաճախորդը նույնականացման համար ներկայացնում է փոփոխված կամ բացակայող վավերապայմաններով անձը հաստատող փաստաթուղթ.
- Հաճախորդը ներկայացնում է հակասական և իրարամերժ անձնական տվյալներ.
- Հաճախորդը հրաժարվում է ներկայացնել անձը հաստատող որևէ փաստաթուղթ և (կամ) անձնական տվյալներ.
- Հաճախորդը խաղային արժեկիրներ ձեռք բերելու կամ իր անհատական հաշիվը համալրելու նպատակով օգտագործում է կեղծ թղթադրամներ կամ չեկեր.
- Հաճախորդը խաղային արժեկիրներ ձեռք բերելու կամ իր անհատական հաշիվը համալրելու նպատակով օգտագործում է կեղծված անկանխիկ վճարամիջոցներ (դեբետային, կրեդիտային կամ նվեր քարտեր):

Զ.1) Պայմանավորված խաղի միջոցով փողերի լվացման մեթոդներ

17. Պայմանավորված խաղի միջոցով փող լվացողներն ապահովում են խաղի՝ իրենց համար ցանկալի արդյունք, ինչը թույլ է տալիս հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները հետագայում ներկայացնել որպես խաղից ստացված «մաքուր» միջոցներ: Պայմանավորված խաղի միջոցով կիրառվում են փողերի լվացման հետևյալ մեթոդները.

1) **Մեկ այլ հաճախորդի հետ պայմանավորված խաղ.** Այս դեպքում փող լվացողների կազմակերպված խումբը ներգրավվում է շահելու համեմատաբար ցածր հավանականությամբ և ցածր ռիսկով խաղերում, ինչպիսին է, օրինակ, ռուլետկան: Մասնավորապես, երկու կամ ավելի զույգ հաճախորդներ նույն սեղանի շուրջ կատարում են հավասար գումարով, բայց միմյանց հակադիր խաղադրույքներ, օրինակ՝ «Ա»-ն կատարում է 100.000 ՀՀ դրամի խաղադրույք սևի, իսկ «Բ»-ն՝ կարմիրի վրա: Բնական է, որ «Ա»-ի պարտվելու դեպքում «Բ»-ն շահում է և հակառակը: Այս մեթոդը կոչվում է նաև «միտումնավոր վնասների» մեթոդ, երբ մի հաճախորդի կրած վնասն իրականում փոխհատուցվում է նրա խաղընկերոջ ունեցած շահումով:

2) **Խաղատան աշխատակցի հետ պայմանավորված խաղ.** Խաղատան համապատասխան աշխատակցի կամ նրանց կազմակերպված խմբի հետ համաձայնության գալով՝ փող լվացողները կարող են առանց նկատվելու հասնել

իրենց նպատակին, այն է՝ օրինական տեսք տալ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներին: Այս սխեմայում ներգրավված խաղատան աշխատակիցները փողերի լվացման սխեմայի իրացմանը նպաստում են նույնականացման և (կամ) հաշվետվականության սահմանաչափը գերազանցող գումարով կամ կասկածելի գործարքների մասին համապատասխան մարմիններին չհայտնելու, հաճախորդի պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ փաստաթղթերը կամ կատարված գործարքների մասին գրառումները ոչնչացնելու, խաղալու արդյունքում հաճախորդի շահումների վերաբերյալ տվյալները կեղծելու, խաղի ընթացքը հաճախորդի համար նպաստավոր ձևով տանելու, մեկ այլ հաճախորդի հետ պայմանավորված խաղը «չնկատելու» միջոցով:

2.2) Պայմանավորված խաղի միջոցով փողերի լվացման կասկածելիության չափանիշներ

18. Պայմանավորված խաղի միջոցով փողերի լվացման սխեմաների հնարավոր առկայության մասին կարող են վկայել հետևյալ չափանիշները.

- Երկու կամ ավելի զույգ հաճախորդներ շահելու հավասար հավանականությամբ հակադիր (միմյանց փոխլրացնող) խաղադրույքներ են կատարում (օրինակ՝ ռուլետկայի, բակկարատի կամ մինի-բակկարատի, ոսկրախաղի դեպքում).
- Երկու կամ ավելի զույգ հաճախորդներ տվյալ խաղը հաճախ խաղում են նույն սեղանի մոտ.
- Երկու կամ ավելի զույգ հաճախորդների խաղի արդյունքները հաճախ հակադիր կրկնում են միմյանց (մեկի շահելը «համընկնում է» մյուսի պարտվելու հետ).
- Հաճախորդը փորձում է ընկերանալ խաղատան աշխատակիցների հետ.
- Հաճախորդը նախընտրում է խաղալ որևէ կոնկրետ աշխատակցի կողմից սպասարկվող սեղանի մոտ.
- Խաղատան աշխատակիցը խաղատնից դուրս շփումներ կամ կապեր ունի խաղացողների հետ:

Է) Այլ մեթոդներ և չափանիշներ

19. Խաղատների միջոցով փողերի լվացման այս կամ այն մեթոդի համար բնութագրական կասկածելիության չափանիշներից զատ, գոյություն ունեն նաև կասկածելիության ընդհանուր չափանիշներ, որոնք կարող են վկայել փողերի լվացման այլ՝ վերը չնկարագրված սխեմաների հնարավոր առկայության կամ մի քանի սխեմայի համատեղ կիրառության մասին: Այսպիսի չափանիշների թվին են պատկանում հետևյալները.

- Գործարքները չեն համապատասխանում հաճախորդի գործարար կերպարին.

- Հաճախորդը կարճ ժամանակահատվածում կատարում է մեծ ծավալով գործարքներ.
- Հաճախորդի կողմից կատարվող գործարքների ծավալը շեշտակիորեն աճում է.
- Հաճախորդը պատկանում է բարձր ռիսկային որևէ խմբի (օրինակ՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ է).
- Հաճախորդի վերաբերյալ առկա է բացասական բնույթի տեղեկատվություն (օրինակ՝ նախկինում դատվածություն):

ԳԼՈՒԽ 4. Եզրակացություններ

20. Ներկայացված սխեմաներով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ պարունակում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

21. Փողերի լվացման հնարավոր սխեմաների առկայության վերաբերյալ եզրահանգման գալու նպատակով շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք և խաղատները, բանկերը, ինչպես նաև այլ շահագրգիռ անձինք պետք է ուշադրություն դարձնեն այդ սխեմաների հայտնաբերման տեսանկյունից էական համարվող՝ սույն տիպաբանությամբ նկարագրված, ինչպես նաև սեփական փորձից բխող չափանիշներին ու հանգամանքներին և ձեռնարկեն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված միջոցառումներ: